

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միտայն խմբագրատան մէջ:

(Օտարաբաղաբայի գիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшак“

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Նացի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Անգլիան ինչ շահ ունի.— Ներքին տեսու-
թիւն: Սպառող ընկերութիւնների մասին և նը-
րանց կարևորութիւնը մեզ համար: Ներքին լուրեր:
— Արտաքին տեսու-
թիւն: Գերմանիա: Նամակ
Թիւրքիայից: — Մշակիչ
Նուագիչներ: — Գայտարա-
րութիւններ.— Տեղեկացոյց:

ԱՆԳԼԻԱՆ ԻՆՉ ԶԱՆ ՈՒՆԻ

III

Յայտնի է որ պատերազմական
գիտութեան մէջ սովորեցնում են
ինչ է պատերազմական ընական
ամուր դիրքի իդէալական կատա-
րելատիպը: Բայց իսկապէս ա-
մուր դիրքի իդէալական կատա-
րելատիպը ընականապէս ոչ մի
երկրի մէջ չէ գտնվում: Հատ գի-
տութիւն, հմտութիւն, արհեստ
պէտք է գործ զնել մի փոքր ի-
շատէ կատարեալ ամուր դիրք
ստեղծելու համար, մի դիրք, որ
մտենար թէօրիական կատարե-
լատիպին: Բայց մեզ հաստատ
աղբիւրներից յայտնի է որ Հայաս-
տանի անգլիական հիւպատոս, պ.
Տրոտտեր, մեր ծանօթներից մինի
հետ խօսելու ժամանակ, վկայել է
որ Հայաստանը ամբողջ երկրա-
գնտի վրա այդ կողմից բացառու-
թիւն կազմող մի երկիր է և որ
Հայաստանի իւրաքանչիւր քայլա-
փոխում պատահում են այնպիսի
ընական պատերազմական դիրքեր,
որոնք կարող են պատերազմական
ճիշդ գիտութեան մէջ ամուր դիր-
քերի կատարելատիպեր համար-
վել: Հայաստանը միակ երկիր է,
որտեղ պատերազմական վերացա-
կան թէօրիական իրականութիւն է
գառնում... Եւ այդ ասում է
Տրոտտեր, անգլիացի ինժեները,
որ ուղարկված է եղել իր տերու-
թեանց Հայաստանի տեղագրա-
կան դիրքը ուսումնասիրելու հա-
մար...
Եւ դուք կարծում էք որ սրա-
նից յետոյ Անգլիան կընծայի Հա-
յաստանը հայերին, կընծայի մի
թէ և կուլտուրական, բայց ոչ պա-
տերազմական ազգին իր համար
մի այդ տեսակ թանգազին պա-
տերազմական երկիր...
Դա երեխայութիւն կը լինէր
մտածել մինչև անգամ այդ տե-
սակ ցնորքների վրա և յափշտակ-

վել Անգլիայի մարդասիրական
աղաղակներով:
Ահա թէ ինչպէս և ինչի Ան-
գլիան չէ կարող համբերել
քրիստոնեաների դառն վեճակը...
Անգլիային հարկաւոր է Հա-
յաստանը որպէս պատնէշ Ռու-
սաստանի դէմ, որպէս մի երկիր
որտեղ նա կառուցանում է երեք,
չորս շարք ամրոցների, որոնք ի-
րանց գծերի ճակատով պէտք է
պաշտպանեն նրա երկաթուղու
գծերը Փոքր-Ասիայում և Սիրիա-
յում, այն երկաթուղիները, որոնք
կը տանեն նրան դէպի Պարսկաս-
տան և Հնդկաստան...
Գուցէ Անգլիան ճշմարիտ հո-
գում է Հայաստանի մասին, կա-
սեն մեզ հողում է նրա ինքնավա-
րութեան մասին և իր բոլոր ամ-
րոցները կառուցանելուց յետոյ,
կընծայէ այդ բոլոր ամրոցները
հայերին...
Հաւատացէք որ Անգլիան այդ-
քան յիմար չէ: Նա այդ քան ջանք
չի անի, այդ քան միլիոններ չի
ծախսի Հայաստանի ինքնավարու-
թեան համար: Նա այնքան յի-
մար չէ որ չը հասկանայ որ եթէ
Հայաստանը իր ինքնավարութիւ-
նը կը ստանայ, մինչև անգամ ան-
կախ կը դառնայ, նա երբէք պա-
տերազմական երկիր չի դառնայ,
երբէք հարկաւորութիւն չի ունե-
նայ ոչ որի դէմ պատերազմելու:
Ինքնավարութիւն ունեցող Հա-
յաստանին ոչ մի ամրոց հարկա-
ւոր չէ, հայերին իրանց անձը ա-
ւազակ քիւրդերի դէմ պաշտպա-
նելու համար եւրոպական զինուո-
րական գիտութեանը համեմատ
չինված ամրոցներ հարկաւոր չեն...
Վերջերի դէմ պաշտպանվելու
համար բաւական է հայերին մի
քանի հազար հոգուց բաղկացած
միլիցիա, աւելի ոչինչ:
Վերջացնում ենք մեր խօսքը
ասելով երանի թէ Հայաստանի
վերաբերութեամբ անգլիացիների
գիտաւորութիւնների մասին մենք
սխալված լինեինք: Բայց աւելի
լաւ է զգոյշ լինել, քան թէ հա-
ւատալ բառերին, յափշտակվել
մարդասիրական դարձակ խոս-
տումներով երբ հակառակ և շատ
ծանրակշիռ փաստեր կան,— և
վերջը սխալվել...

Դա անուղղելի մի սխալ մի
դառն սխալ կը լինէր:
Թո՛ղ թիւրքիայի հայերը հե-
տևեն ուրիշ ազգերի օրինակին,
ուսումնասիրեն նրանց պատմու-
թիւնը:
Իսկ ողորմելի թիւրքաց տե-
րութեան վրա մենք չենք էլ խօ-
սում: Եթէ նա կարողանար հաս-
կանալ թէ ինքն մի ողորմելի
խաղալիկ է միայն Անգլիայի ձեռ-
քում, և եթէ կարողանար իրան
սպառնող վտանգին առաջն առ-
նել,— որքան օգուտ կարող էր նա
բերել թէ իրան և թէ իր հպա-
տակ հայ ազգին:
Թո՛ղ թիւրքիայի հայերը, ու-
րեմն, միմիայն իրանց վրա յոյս
դնեն, եթէ կարող են: Թող
իմանան որ նրանց ոչ որ չի օգնի,
թող իմանան որ եւրոպական պե-
տութիւններից ոչ մինը չի ընդ-
դիմանայ Անգլիային, եթէ սա
այսօր կամ վաղը կուզենայ մրտ-
ցնել իր գորբերը Փոքր-Ասիա և
Հայաստան, իբր թէ քրիստո-
նեաներին պաշտպանելու համար
և այսպիսով կատարելապէս նուա-
ձել այդ երկիրները: Գերմանիան
և Աւստրիան վճռել են առանձ-
նացնել Ռուսաստանը: Գերմա-
նիան ձգտում է խլել Ռուսաս-
տանի ձեռքից Բալկանեան թե-
րակղզու սլավեան ազգերի վրա
նրա ունեցած հեղինակութիւնը
և յանձնել այդ հեղինակութիւնը
Աւստրիային: Աւստրիան, ուրեմն,
շահեր ունի եւրոպական թիւր-
քիայում: Թէ Գերմանիան և թէ
Աւստրիան չեն ընդդիմանայ, ու-
րեմն, Անգլիային տիրապետելու
Փոքր-Ասիայում: Փրանսիան
թող է և զբաղված է իր ներքին
գործերով: Մնում է Իտալիան, որ
մէնակ ոչինչ չէ կարող անել:
Անգլիան, ուրեմն, ազատ է
վարվել Ասիայում, ինչպէս կը կա-
մենայ: Նա վաղուց է սպասում
էր այդ տեսակ պատեհ րօպէին,
— և ահա հասաւ ժամը, երբ նա
իր ատամներն է սրում իր դարևոր
բարեկամին, թիւրքիային կյանե-
լու, նրա տեղը Ռուսաստանի հա-
րեանը դառնալու համար... Հատ
ժամանակ չի անցնի,— և նա կը
կատարի իր գիտաւորութիւնը:
Եւ դեռ գտնվում են միամիտ-

ներ, որոնք կարծում են թէ իր շա-
հերը թողած Անգլիան իր բոլոր
ջանքեր է թափում ի սեր հայերի...
Անգլիան չի յանձնի իր ամ-
րոցները ինքնավարութիւնը ստա-
ցած հայերին, այն ազգին, որ
պէտք չունի ոչ մի ամրոցի, որի
տխուր նշանաբանն է, ինչպէս
ինքն Անգլիան գիտէ, քաղաքա-
կրթական, խաղաղական պատե-
րազմ, և որին ինքն լորդ Սալիս-
բուրի նորերումն անուանեց քա-
ղաքական կեանքին անընդու-
նակ ազգութիւն, որ անգլիացի-
ների լեզուով կը նշանակի՝ պա-
տերազմական կեանքին ան-
ընդունակ ազգութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՊԱՌՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԵՒ
ՆՐԱՆՑ ԿԱՐԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՋ ՀԱՍՏԱՐ

Արեւմտեան Եւրոպան՝ անցնելով քաղաքա-
կրթութեան երկար և դժուար ճանապարհը,
շատ մեծամեծ սխալներ է գործել, որոնց
հետևանքները շատ անգամ դառն են եղել:
Նոր քաղաքակրթվող ազգերը միշտ կարող են
օգտվել անցնող փորձերով, և ապա մնալ
շատ յիմարութիւններից և մտորութիւններից:
Նրանք կարող են շատ չարիքների առաջը
առնել այն միջոցներով, որոնց Եւրոպան ըս-
տեղծել է մի փոքր ուշ: Եւրոպայի քաղաքա-
կրթութիւնը իր փարթամ հարստութեամբ
չը պէտք է մեզ հիացնի, երբ իմանանք որ
այս քաղաքակրթութեան պտուղները փոքրա-
թիւ քաղաքներն են վայելում, երբ իմա-
նանք, որ նրա միլիոնաւոր ժողովուրդի արիւն-
քովնք աշխատանքի գինը մնում է մի քա-
նի տասնեակ դրամատերերի գրպանը, մինչ-
դեռ մշակին մնում է այնքան, որ նա կարո-
ղանայ միայն իր Ֆիլիքական ուժը պահելու
կրկին դրամատերերի գրպանը հարստացնելու
համար:
Անկասկած, մի այսպիսի սարսափելի երե-
ւոյթ չէր կարող այս մարդասիրական դարում
անուշաղբի մնալ զգայուն սրտերից, ամեն մի
կերպ միջոցներ են գործ դրել մշակների նե-
թական գրութիւնը բարեբեկու, քարոզել են
և քարոզում են հիմա ևս նոր վարդապետու-
թիւններ, որտեղ աւանդվում է բոլորովն
նոր հասարակական կազմակերպութիւն աւելի
արդար հիմունքների վրա, քան թէ ներկան.
շատերը այս վարդապետութիւնները ցնորք
են անուանում, ուրիշները համոզված են, որ
նրանք կարող են իրագործվել և բաղաւո-
րացնել մարդկային ազգը. թէ ո՞ւմ կողմն է
ճշմարտութիւնը, ապագան կը պարզէ միայն
այս պէտք է ասել, որ երևելի ջօն Ստրուարտ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
յայտնում է, որ հիւրանոցատեղերը, ուստի-
ղենների խանութատեղերը, խմիչքների կր-

Չախար Արզէլի և Նատարա Ար-
տեմիլա Նարինանովները յայտնելով
բարեկամներին և ծանօթներին իրանց
որդի Ս երգէլ Չախարիչ Նարե-

25 ԲՈՒՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ
Կորցրած են մի զոյգ ոսկէ զագոնիաներ
միդալոններով և կանաչի պատկերներով, նը-

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾՆՈՒՆԸ ՍՈՒՐԲ
ԳՐՈՑ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ
Պ ա ղ Ե ս տ ի ն ու ա շ խ ա Ր հ ա ջ ո յ յ ո Վ
Աշխատարութիւն Յարութիւն քահանա-

Օ Տ Ե

ADMINISTRACIJA GAZETY „TRUD“.

Контора Редакции новой еженедельной русско-армянской полити-
ко-литературной газеты „Труд“ помещается на Головинскомъ про-
спектѣ, въ верхнемъ этажѣ зданія князя Багратіонъ-Мухранскаго,

1) ПОДПИСЧИГАМЪ ГОРОДСКИМЪ:

Съ доставкой въ Тифлисѣ . . . р. с. 5—50.
Безъ доставки . . . „ „ 5—

2) ИНОГОРОДНЫМЪ ПО ИМПЕРІИ:

Съ пересылкою за счетъ редакціи . . . р. с. 6—
Вгдѣ Имперіи по международному
тракту . . . „ „ 7—

При каждой перемѣнѣ адреса дальнѣйшая затѣмъ обязательная
доставка или пересылка газеты должна оплачиваться, сверхъ уста-

На пол-года подписки не допускаются.

Органъ, при наличности пяти-сотъ подписчиковъ, будетъ изда-
ваться весь годъ въ послѣдовательномъ порядкѣ въ величинѣ с.-пе-

«Աշխատանք» լրագրի խմբագրութեան կողմից:
Նոր «Աշխատանք» անունով ռուսա-հայ քաղաքագիտական-գրա-
կանական շաբաթաթերթի լրագրութիւնը գտնվում է Գոյովիսկի

Տարեկան բաժանորդագրւիւր.

- 1) Քաղաքացի բաժանորդներին.
Տուն հասցնելով Թիֆլիսի մէջ Ռ. Ա. 5—50
Առանց տուն հասցնելու « » « » 5—

Իւրաքանչիւր հասցէն փոխելուց յետ, պիտի խմբագրութեան հաս-
ցնեն ինչպէս լրութիւն, 25 կոպ. արծ. Կէս տարով ստորագրութիւն

Լրագիրը մտադրվում է հրատարակել Պետերբուրգեան «Голосъ»
լրագրի մեծութիւնով, ողջ տարին անընդհատ, հենց միայն բաժա-

Table with multiple columns containing financial and administrative data, including sections for 'ՆՈՅՄԱՐԵՐԻ 3', 'Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ւ Յ Ց', and 'ԹԻՖԼԻՍ 1879'. It lists various items, prices, and percentages.